

## ՀԱՒՈՂԱՆՔ, ԹԵ՛ ՆԱՀԱՆՋ

(Ինչո՞ւ խափանվեց Աբովյանի «Պարապ վախտի խաղալիքի» տպագրությունը)

Քանասիր. գիտ, դրկտոր Պիոն ՀԱԿՈՅԱՆ

Ուղիղ երևք տասնամյակ, անշուշտ, մեծ ու փոքր դադարներով, մեր ուշադրության առարկան է եղել Աբովյանի աշխարհաբար շափածո երկերի այս ժողովածուն՝ իր ուրույն կառուցվածքով ու մտահղացմամբ, իր աստիճանական ձևավորման ընթացքով, իր մեջ համալսմբված պատմողական ու ընարական սեռի այլևայլ տեսակների՝ առակ, բայաթի, երգեր և այլն, գաղափարական-գեղարվեստական հատկանիշներով, միջնադարյան հայ առակագրության սովանդների և մասնավորապես Մխիթար Գոշի տեսության հայեցողությունների հետ ունեցած ընդհանրություններով, թարգմանական բնագրերի և ինքնուրույն հղացումների ոճական առնչակցություններով, առակների ազդային ու միջազգային սկզբնաղբյուրների բազմաղանկյունի և այլն: Այս խնդիրների մեծ մասը հնարավորին չափ լուսաբանվել է ցարդ տպագրության հանձնված մեր փոքրածավալ հետազոտություններում՝

1. Աբովյանի «Պարապ վախտի խաղալիքի» ատեղծագործական պատմությունից («Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 1, էջ 69—88):

2. Խ. Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն («Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 3, էջ 59—78):

3. Խ. Աբովյանի «Բայաթիները» («Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 56—70):

4. Առակների տեսությունը միջնադարյան Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես», 1995, № 1, էջ 169—190):

Այդ հոդվածներին զուգահեռ տպագրության ենք պատրաստել նաև «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի գիտաքննական նոր քննադիրը՝ հանդերձ տարբերակներով ու տարրնթերցումներով, հավելյով վերջիններին հեղինակի՝ նույն սեռի ու առակի մյուս երկերը (առակներ, բայաթիներ, Աղասուն վերագրված երգեր), որոնք ցրված էին Աբովյանի ատեղծագործական ձեռագրերի և «Նախաշավիղ կրթության» դասագրքի այլևայլ էջերում: Հարցերի քննությունն ամբողջացնելու համար մնում է լուսաբանել մի քանի խնդիր ևս՝ կապված բանաստեղծական պատգամ հիշեցնող ոտանավորներից մեկերկուսի և հեղինակի համապատասխան շրջանի անձնական կյանքի և գրական ու լեզվական հայեցողությունների հետ, որոնք որոշակի հետք են թողել ժողովածուի ճակատագրի վրա, նախ՝ հետաձգել տալով, իսկ այնուհետև առհասարակ հետ կանգնեցնելով ժողովածուն հրատարակելու մտքից: Ծանոթանանք քննության կարող ալդ երկերին ու խնդիրներին:

### 1

«Պարապ վախտի խաղալիքի» գաղափարական նյութակառուցվածությունը ճիշտ հասկանալու համար հարկ է գեթ ընդհանուր գծերով անդրադառնալ «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» քերթվածին, որն իր անթաքուց բովանդակությամբ նույն նպատակներին է առնչվում, նույն հարցերը վերաբնում, ինչ տվյալ ժողովածուի Հառաջաբանը և «Էս գրքի ճամփի խրատը» խորագրով այլաբանական մուտքը: Այս բանաստեղծությունը մի որոշ առումով կարելի է նաև հեղինակի ինքնախոստովանություն կամ կտակականել, որովհետև Աբովյանն այդպիսի անկեղծորեն խոսում ու պատմում

է այլ նվիրական իղձերի ու հանապազօրյա իրոհերի մասին, որոնց առանցքը հայրենիքի գալիքն ու ճակատագիրն են, ի խորոց սրտից բարձրյալին է ուղարկում իր ամենօրյա աղոթքն ու պաղատանքը՝ սիրելի ազգի ու ազգակիցների տնտեսական վիճակի բարվոքման, հոգևոր վերածնության ու բարգավաճման համար:

Ո՛չ երկար ապրիլն էր իմ ուզածք,  
Ո՛չ լավ օր բաշիւն, ա՛խ, իմ խնդրածը.  
Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,  
Երբ չէի կարում պետքը դալ ազգիս:

Իշխանութունն թե՛ կամ փառք ուզեցի,  
Թագի, պսակի թե՛ փափագեցի,  
էնդուր համար միայն, որ հազար մարդի  
Աչքի արտասունքն սրբեմ, որ շցալի:

Փակ էր աշխարհն, սե՛ իմ քաշած օրն,  
Որ ձեռս չհասավ, ինչ ուզեց սիրտս որ.  
Արարիչ իմ տեր, թե՛ մարդ շիմանա,  
Իմ ալոթքն էս էր, քեզ լավ հայտնի ա:

Մարդիկ, ա՛խ, մարդիկ, դուք ե՛րբ կզարթնիք,  
Որ սիրտ-սրտի տաք, միմյանց քոմակ ըլիք:  
Իժանաք՝ մեր դրախտն ու կյանքն հենց էն ա,  
Ով խղճի, ազգի ցավը կիմանա:

Կարծիք կա, որ սույն բանաստեղծությունն, իբրև թե գրված է «երևան-լան շրջանում» (այսինքն՝ 1843 թ. աշնանից ո՛չ առաջ և 1848 թ. մարտից ո՛չ ուշ)<sup>1</sup>, որ թյուրիմացության արդյունք է, ինչպես «Պարապ վախտի խաղալիքի» քնարական սեռի մյուս հորինվածքները, այնպես և այս բերթվածի գրության ժամանակն ընկնում է 1841 թ. փետրվարից հետո, բայց ո՛չ ուշ, քան նույն տարվա նոյեմբերը: Նշված ժամանակաժիջոցը դեռ կարելի է ավելի սեղմել՝ օգտվելով վերևում մեր մեջբերած բառատողերից երկրորդի մեջ առկա ինքնակենսագրական տվյալներից:

Ավանդաբար փոխանցվող զրույցներից իմանում ենք, որ ժամանակակիցները մեղադրել են Արովյանին (անգամ նրա մահվանից շատ տարիներ հետո էլ), իբր, հանուն աշխարհիկ փառքերի՝ հոգևոր կոչումն ու վանքը թողնելու, պետական ծառայության մտնելու և ամուսնանալու համար: Այդ անհիմն բամբասանքի ուշացած արձագանքները կարելի է տեսնել Աղեքսանդր Երիցյանցի «Խաչատուր Աբովյանի ամուսնությունը» հոդվածում՝ հրատարակված «Արձագանք» լրագրի էջերում: «Արքունի ծառայության մտնելով՝ Աբովյանցը փոքր առ փոքր մտքից հանեց կուսակրոնությունը և հետամուտ եղավ աշխարհական փառքերի, այն է՝ աստիճանների ու շքանշանների, որոնց արժանանալու համար, սակայն, նախ կարևոր էր... արձակվել հոգեվոր կոչումից»,— գրել է Երիցյանցը, իսկ այնուհետև՝ մեղադրել Աբովյանին, որ փորձ է արել էջմիածնի Սինոդին գրդիլ՝ «խարդախություն գործելու», այսինքն՝ առաջարկել է հոգևոր կոչումից արձակվելու վերաբերյալ իրեն տրվելիք հրամանը ձևակերպել «երկու ամօք, նումերով և թուով յառաջ»: Բայց «Սինոդը մերժեց այդ ապօրինի պահանջը...»,— ներքին շարախնդությամբ եզրափակում է նա<sup>2</sup>:

Սույն բանաստեղծությամբ՝ Աբովյանն ահա՛ պատասխանում էր այդ

1 Ե, I, 394:

2 «Արձագանք», 1894, հեկտեմբերի 23, № 123, էջ 3—4:

օրինակ զբաղարտանքներին, միաժամանակ բացատրելով իր զրական բարեկամներին ու ընթերցողներին, որ եթե սլետական ծառայութեան և աստիճանի և ձգտել (իսկ 1811-ին այս խնդիրն Աբովյանին շատ էր հուզում), կամ էլ՝ ամուսնացել ու ընտանիք կազմել (1839-ի աշնանը ամուսնացել էր ռեյցի օրիորդ էմիլիե Լոդդեի հետ), ապա միայն նրա համար, որ գոնե հանրային ու դպրոցական ասպարեզներում կարողանար իրեն ավելի ազատ զբաղ և պիտանի լինել սիրելի ազգին, մանավանդ որ վանքն այդ սարիներին նման հնարավորություն նրան բացարձակապես չէր կարող կամ չէր ուզում տալ:

1841 թ. հունիսի 2-ի և հոկտեմբերի 19-ի նամակներով՝ Աբովյանը թախանձագին խնդրում էր ակադեմիկոս Քրիստիան Ֆրենի աջակցությունը, որպեսզի ծառայություն քառամյակը լրանալու կապակցությամբ կարողանար ստանալ օրենքով իրեն հասանելի համապատասխան աստիճանը՝ տիտղոսավոր խորհրդակցանի, որի համար անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Կնոպֆեր թեպետև արդեն սյառաջև միջնորդագիր էր ուղարկել Պետերբուրգ սակայն ևնխադրվում էր, որ ինչ-ինչ զժվարություններ կարող էին ծագել, երբ Աննան սկսեր քննել այդ հարցը: Բանն այն է, որ Աբովյանի իշխանավորները ժամանակին չէին տեղեկացրել Սենատին, որ նա թողել է հոգևոր կոչումը, և նախորդ աշխատանքային երեք տարիները կարող էին շահվել, իսկ 1839 թվականից հետո աշխատած երկու տարին հիմքեր չէր տա կամ չէր բավարարի համապատասխան աստիճանն ստանալու:

«Դուք, բարերար պաշտպան,—գրում էր Աբովյանն առաջին նամակում,—բաշ գիտեք, թե ինչ է նշանակում, երբ մարդ Ռուսաստանում աստիճանի և հասնում, առանց որի կես մարդ է նկատվում... Ձեզ հայտնի պիտի լինեն ճանապարհները, թե ինչպե՞ս և ո՞ւմ հետ պետք է խոսել, որպեսզի ես գեթ չկորցնեմ այն, ինչ որ ինձ հասնում է օրենքով»<sup>3</sup>:

Երկրորդ նամակն ավելի տագնապալից էր և սրտառուչ. «Ա՛խ, աստիճան և նշան ես երբեք մտրոյս չեմ անցկացրել, ինձ համար իսկական երջանկություն կլիներ հանգիստ, լռիկ անել այն, ինչ որ իմ սիրտն է այնքան փափագում, բայց, ավա՛ղ, ցավոք այժմ ստիպված եմ. առանց դրան մարդ մարդ չէ, ուստի դադարյալ պետք է ես հոգամ ու տանջվեմ այսպիսի մտածմունքներով...»<sup>4</sup>:

Ահա՛ այս սրտամաշ հոգսի պատճառով ապրած տևական մտատանջումներից էլ ի վերջո ծնվել է «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» բանաստեղծությունը, որի մեջ անկեղծորեն պատմելով իր ցավերի մասին և բացատրելով բազարացիական անձնաշնորհումների ձգտելու բուն պատճառները, ցանում էր ալո ձևով, դեթ հոգու խորքում և իր ներքին դատավորի առաջ, արդարացիներին իրեն, որ, թվում է, այնքան էլ դյուրին բան չէր, որովհետև, դեռ ծննդյան օրվանից, ծնողների կամքով նախասահմանված լինելով հոգևոր կոչման, իսկ տարիներ անց հրաժարվելով դրանից, այսինքն՝ դժելով իր ուխտը. Աբովյանն, ըստ էության, չէր կարողանում ինքնաարդարացման հիմունքներ գտնել, թեպետև հանդանրները թեթևադնոդ պատճառները, կարծես, դրաավոր էին:

Էնդուր համար միայն, որ հազար մարդի

Աչքի արտասուներն սրբեմ. որ շցավի...

Ահա՛ այս ամենը հաշվի առնելով՝ հնարավոր ու հավանական է՞ր բռնում ևնխադրել, որ «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» բերթվածը 1841 թ. հոկտեմբերի 19-ից առաջ և նույնամբերից ուղ չէր կարող աշխարհ դալ:

«Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» շատ-շուտով շտեմում է ընթերցողների համակրանքը և տակավին ձեռագիր ու անտիպ՝ արտագրվում ու տարածվում: Վերջիններից մեկը, որն, ինչպես վկայում են, հայտնաբերվել

<sup>3</sup> Ե, X, 244 [247]:

<sup>4</sup> Նույն տեղում. էջ 248 [249—250]:

է Արեւ Մխիթարյանին պատկանող ինչ-որ տետրակում և «Պարապ վախտի խաղալիքում» առկա բնագրի համեմատութեամբ ունի լեզվաոճական նկատելի տարբերութիւններ, հրատարակվել է դեռ 1897-ին, «Լուսա» հանդեսի № 1-ում, Գյուտ Աղանյանի ձեռքով: Այդ տարբերակում խորագրի մեջ լրացում է կատարված՝ «Ազգասեր մարդը (Աթուլյանը) յուր մեռնելու վախտը»<sup>5</sup> նշանակում է՝ եթե ո՛չ Աթուլյանը, ապա ժամանակակիցներն ու հետևորդներն այն դիտել են իբրև հեղինակի կտակ:

Այս քերթվածն հորինելիս Աթուլյանը ողջ էութեամբ ձգտում էր հեռու վանել հայ մարդու բնավորութիւնից մասնը ու շնչին կրքերը և անտարբերութեան սպանիչ թուլը, ապրեցնել նրան լիարյուն կյանքով և հասարակական-քաղաքական շահախնդրութիւններով: Նա գիտեր, որ դա մի օրվա, մի տարվա բան չէ, և կպահանջվեր տեղական ժամանակ, հետևաբար և պաղատագին խնդրում էր ազգակիցներին՝ մտորել հայրենիքի ցավերի և խեղճ ու թրշվառ ժողովրդի մասին: Աթուլյանն իրեն լիովին վարձատրված կղզար, եթե այս ուղղութեամբ մեր ազգային կյանքում շարժում ծավալվեր, թեկուզ և առժամանակ այն աննշան էլ լինէր: Իսկ եթե իր շարունակական հորդորներն անարձագանք մնային, սպաս դա կլինէր մի այնպիսի ահապոր հարված, որը կանշարժացներ ամեն միտք, կաթվածահար կդարձներ ամեն դգացում, կհորտակեր աճեն հույս ու երազանք: Դրանք էլ իրենց հերթին ենթադրել են տալիս այնպիսի ողբերգական ավատ: որպիսին կարելի է տեսնել վերածնութեան դարաշրջանի հանճարեղ ողբերգակաների թատերգութիւններում: Դրանից հետո Աթուլյանի խառնվածքն ունեցող մարդու համար ապրելն ու խորհելը կդառնար աննպատակ ու սնիմաստ:

«Պարապ վախտի խաղալիքի» պահպանված ձեռագրի հետ, միևնույն կազմի մեջ ու ընդհանուր համարակալութեամբ, ամփոփված է նաև «Ֆեոդորու կամ որդիական սերը» թատերգութեան թարգմանութիւնը<sup>6</sup>, որը հետադալում (1864 թ.) հրատարակվել է իբրև տվյալ ժողովածուի բաղկացուցիչ մաս, մինչդեռ Հառաջաբանից հայտնի է, որ «Պարապ վախտի խաղալիքը» պարունակել է նախորդ էջերում մեր ըննած նյութերը սոսկ, կամ՝

ա. «Մեր խալխի խոսած բաները» և «Թարգմանութիւններ» (այսինքն՝ առականեր և շափածո այլարանական դրույցներ):

բ. «Բայաթիք»:

գ. «Աղասու մեկ քանի խաղը»:

Անունով չեն հիշված միայն քնարական հատվածները («Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը», «Ըմ բարեկամ Աղաջան Վարդանյանի պատկերի առաջին», «Տխուր գանգատ բարեկամի մոտ»), որոնք, սակայն, և՛ ինքնագրի մեջ, և՛ ժողովածուի նյութերի ցանկի կամ բովանդակութեան տպագիր տարբերակում, տեղավորված են Բայաթիքների և Աղասու խաղերի արանքում և որոնց «Պարապ վախտի խաղալիքին» վերաբերելը կասկածից դուրս է,

<sup>5</sup> Տպագրվելու վերաբերյալ հայտարարութիւնը տե՛ս «Արձագանք», 1896, դեկտեմբերի 29, Մ 154, էջ 4: Երևի այս ձեռագիրն է պատճառ դարձել, որ անցյալներում ումանք «վկայել» են, թե Աթուլյանն իր մահվան օրը Երևանից էջմիածին է ուղարկել ինչ-որ բանաստեղծութիւն, առանց սակայն բուն գրվածքը հրատարակ հանելու: Այսպես, Վարդան ավագ քահանա Գասպարյանց կողմը մեկը 1899 թ. հոկտեմբերի 22-ին Արմավիրից գրել է Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանցին. «Խաշատուր Աթուլյանի հորինած մեկ ոտանավոր կար ինձ մոտ, էջմիածնումը եղած ժամանակս նրա անհայտացման իսկ օրը Երևանից ղրկածից արտագրած. պարտեցի հին թղթերիս մեջ. շիտա. բայց, իմ կարծիքով, կորած չպետք է լինի. լի կորունձ ամենայն ուշագրութեամբ... եթե գտնեմ. կղրկեմ՝ թե հետաքրքրական լինի» (ՀԱ, ֆ. 54, դ. 525, թ. 1 ր): Այս վավերագրի արտագրութիւնը մեզ տրամադրել է Գ. Հարութիւնյանը, որի համար անկեղծ շնորհակալութիւն ենք հայտնում:

<sup>6</sup> «Ֆեոդորան» արտագրված է անձանթ ձեռագրով, որ հետագայում Աթուլյանը վերանայել է և նկատած շատ սխալներ ուղղել (տե՛ս Ա. Մ 56, թերթեր 78ա—97բ):

յնայած որ ուսումնասիրողներից շատերը «Պարապ վախտի խաղալիք» ասելով հասկանում են սոսկ առակաները:

«Ֆեոդորան», շհակասելով հանդերձ Աբովյանի ընդհանուր, լուսավորական հայացքներին, մեկուսի է մնում սույն ժողովածուի այնքան լավ մշակված ծրագրից, որովհետև բուն «Պարապ վախտի խաղալիքի» պարունակածը Աբովյանի աշխարհաբար հորինած շախմատական գրվածքների գլխավոր տեսակներն են՝ առականեր, բառյակներ (բայաթի), քնարական բանաստեղծություններ, երգեր, մինչդեռ «Ֆեոդորան» բոլորովին այլ սեռի ստեղծագործություն է, թատերգություն, ծավալով մյուս նյութերի մեկ երրորդի չափ. եթե Աբովյանն սկզբնապես վճռած լիներ «Ֆեոդորան» ևս ժողովածուի մեջ ներառնելու, հաղիվ թե որեէ ձևով շարտեղադրանք կամ շհիշատակեր նրա անունը<sup>7</sup>:

Երևանյան վերջին տարիներին (1847—48 թթ.) միայն, իր ձեռագրերը կարգի բերելիս, Աբովյանը, ինչպես երեւում է, հարմար է դատել «Պարապ վախտի խաղալիքի» հետ միենուն կազմում ամփոփել նաև «Ֆեոդորան», առանց, սակայն, մի ամբողջի մասեր համարելու դրանք:

2

«Պարապ վախտի խաղալիքից» հետո էլ Աբովյանն, երբեմն-երբեմն անդրադառնում էր առականերին, վերանայում հին գրածները: Երևանյան տարիներին վերաբերող տետրակներում (Ա, № 61) կամ էլ առանձին քերթերի վրա, պատահում են աշխարհաբար ու գրաբար ինքնուրույն և թարգմանական առականեր, որոնք, սակայն, գեղարվեստական առումով նույն կատարելությունը չունեն, ինչ հիշյալ ժողովածուում ամփոփվածները, ավելին՝ երկուսը («Սովամահ Շունն ու էջն ու սև Ագռավները»<sup>8</sup>, «Աթար կրողի էջն ու մածնապանի պառավը»<sup>9</sup>) թեպետև աշխարհաբար ու սոցիալական սուր բողոքով ներծածված՝ ընդդեմ ունեղրկողների, լիքն են կուպիտ արտահայտություններով («Քոստոս էջ», «սատկած սպարանք», «իշի թրիքն ու փեխն», «տյոտ ու ցխոտ», «հոտած ծոց», «մեռելի կաշի», «իմանսըղ քավթառ» և այլն), որոնք, ճիշտ է, գոնհիկ ամբողջ գործածում էր, բայց գեղեցիկ գրականության մեջ տեղ չպիտի ունենալին:

Մյուս երկուսը՝ «Ջամանոս ողջոյն ճպուռն ընդոտուն...» և «Սուլեալ Աղուխտն մտեալ ի յալգին...» սկսվածքներով, բացարձակ սևագրություններ են՝ թարգմանված Կուլտովից («Стрекоза и Муравей», «Лисица и Виноград»), այն էլ, գրեթե, բառացի<sup>10</sup>: Սկզբի, գրաբար թարգմանություն է

7 Ի դեպ, ժողովածուի վերջին բանաստեղծության («Աղասու վերջին սուրբ») եզրափակիչ տողերը դրված են ո՛չ թե 78 ա թերթի վրա, ինչպես պետք էր սպասել, այլ 77 թերթի տասնցերորդ: Այս ևս լրացուցիչ կովան է պնդելու, որ «Պարապ վախտի խաղալիքն» իսկապես ավարտվել է «Աղասու մեկ բանի խաղով» և 77-րդ թերթի երկրորդ էջով: 78 ա թերթի վրա դրոշմված է «Ֆեոդորայի» անվանաթերթը՝ նորից անձանոթ ձեռագրով:

8 Ա, № 115 (հմմտ. Ե, II, 281—283): Առաջին տպագրությունը՝ Ընտիր երկեր, հ. II, էջ 170—172:

9 Ա, № 61, էջ 28—31 (հմմտ. Ե, X, 317—319): Առաջին տպագրությունը՝ Ընտիր երկեր, հ. II, էջ 167—169:

10 Ա, № 116 (հմմտ. Ե, II, 284): Առաջին տպագրությունը՝ «Տեղեկագիր», 1945, № 3—4, էջ 95: Ա, № 114 (հմմտ. Ե, II, 285): «Стрекоза и Муравей»-ի թարգմանության թվականը Ա. Ասատրյանը «1839 կամ 1840»-ն է համարել («Տեղեկագիր», էջ 95), որ սխալ է: Սևագրությունն արված է մի երկթերթի թղթի վրա, որի լջիրից մեկուս նախապես, տպագրական տասներով, երկու անգամ դրոշմված է «Ջարման» անձանունը, իսկ այդպես կոչում էի՞: Աբովյանի դատերը, որը ծնվել է 1843 թ. հուլիսի 25-ին: Այս և գրաբար մյուս երկու թարգմանությունները, բոլոր դեպքերում, 1843 թ. հուլիսից առաջ չէին կարող կատարվել: Այդ է հուշում նաև ձեռագրի բնությունը (Ա, № 116): Վերջապես՝ տպագրական տառերի հայտնվելը

յուսև ծանոթ վերջին առակը «Յուզի անձուկ Ձին ընդ առաջ...» սկսվածքով, որի աշխարհաբար տարբերակը շատ տարիներ առաջ Աբովյանը ղեկավարել էր «Պարսպ վախտի խաղալիքի» մեջ, «Անքաղաքավարի էջը» խորագրով. դրա հեղինակն էլ Ի. Խեմնիցներն է («Осел неведжа») <sup>11</sup>:

Երևանի գավառական դպրոցի 1845 թ. ավարտական հանդեսի ծրագրից (կազմված է ն. թ. հոկտեմբերի 10—12-ի միջև) պարզվում է, որ 11 և 171 դասարանների աշակերտներն արտասանելու էին Կոնյուվի առակներն ու այլ ոտանավորներ՝ հայերեն, ռուսերեն և պարսկերեն <sup>12</sup>: Թվում է, վերևում հիշված առակները հենց այդ նպատակի համար էլ թարգմանվել են (1845 թ. սեպտեմբեր—հոկտեմբերին): Նրանց գրաբար լեզուն էլ հօգուտ այդ թվականի է խոսում:

Անցած լինելով հին հայկաբանության բովով՝ Աբովյանը ողջ էությամբ պատկանում էր նորին, արդիականության շահերով այրվող անհատականություն էր, շնայած որ, իբրև բերթող, հրապարակով հրաժարված լինելով իր բրեքմանի բանաստեղծական աշխարհից ու նորին փորած՝ հնի կորուստը ղեկ շարունակում էր անամոր ցավ պատճառով նրան: Վերջին երեք առակների գրաբար թարգմանություններն ա՛յն առ հույսահիտից պիտի դիտվեն, քանի որ դրանք արտահայտությունն են դրուբարի հանդեպ Աբովյանի նորովի վերաբերմունքի, որ բավականաչափ թափանցիկ՝ ստվերագծված է հենց «Պարսպ վախտի խաղալիքի» Հատուցարանում: «Մեր գրաբար լեզուն անգին է, — ասում է Աբովյանը, — Եմանը շունի. ինչո՞ւն լեզու էլ որ դիտեմ, մեկն էլ ու է՛ն համը, է՛ն քաղցրությունը, է՛ն ճոխությունը շունի. բայց մեր վատ բախտիցը՝ հազարից մեկը չի հասկանում, ի՞նչ պետք է արած: Երանի՛ էն սա՛ռ թին, որ մեր ազգը քիչ-քիչ կարողանա էս կորած դանձը դանիլ, ու իր լեզուն սովորիլ, իմանալ բայց ո՞վ չի դիտի, որ սրան շատ ժամանակ կուզի. ու մինչև էն ժամանակը մնալ, ո՞վ գիտի, մարդ սա՞ղ կմնա, թե չէ՞» <sup>13</sup>:

«Կորած գանձը» գտնելու ուղին թեև շատ էր հրկար ու դժվարին, բայց որոշակի էր. աշխարհաբարով ժողովրդին լուսավորելուց հետո, անշուշտ, պետք էր վարժեցնել նրան նաև իր հին լեզվին, որպեսզի ժամանակի ընթացքում հայը կարողանար խոսել ու որել գրաբարով ևս: Աբովյանը հավատում էր այդ օրվան, թեպետ այն դալու էր իրենից հետո:

Երբ պայքարն անգիջում է և օրհասական, լույսն ու ստվերը շեն դանազանվում միմյանցից: Դժվարին հաղթանակից հետո միայն և տարիների շոշափելի հեռավորությունից սթափ մտրով արդյունքներն արժեքավորելիս և ետևում թողած կեռամանների վրա ուշք դարձնելիս՝ մտադիկ նոր միայն նկատում են ավելորդ ջղաձղումների բերած անցանկալի հետևանքներն ու նաև զգում, թե ինչքան, անտեղի ու աննպատակ, ուժեր են վատնել, ինչպիսի՛ թանկագին շիրիմներ թողել անդամ ճանապարհին:

Այս հոգեվիճակի մեջ էր Աբովյանը 1841 թ. աշնանը, «Վերք Հայաստանին» ու վերջինիս հաջորդած ինքնուրույն ու թարգմանական գրվածքների («Ազնես»), «Ֆեոդորա», «Պարսպ վախտի խաղալիք», «Հազարփեղեն» շարքն ստեղծելուց հետո, երբ հետագարձ հայացք գցելով իր անցած ճանապարհի վրա և ուշի-ուշով ծանր ու թեթև անելով աշխարհաբարին քաղաքացիություն տալու ընթացքում, իր լուսավորական ծրագրերը գործադրելիս՝ ձեռք բերած արդյունքներն ու թուլ տված ծալրահեղությունների պտուղները,

առակների ձեռագրի հարևանությամբ ենթադրել և տալիս, որ Աբովյանն աչքի ստաջ ունենալով «Նախաշավիղի» խաչտաքզետ շարվածքն ու տղեղ տառերը՝ մտորել է այսուհետև տաղերից գրքերը և առաջին հերթին «Պարսպ վախտի խաղալիքը» վայելու: ու դեղեղիկ տատերով շարելու մասին: Բայց այս մասին փոքր-ինչ հետո:

<sup>11</sup> Ա, № 114 (հմտ. ե, 11, 362, ճանոթագրությունների մեջ): Աշխարհաբար թարգմանությունը՝ Ա, № 56, Բ, 58բ (հմտ. ե, 11, 264):

<sup>12</sup> ՀԱ, ք. 1, դ. 74, Բ. 10 (հմտ. «Սովետական մտնկավարժ», 1941, № 5, էջ 61):

<sup>13</sup> Խ. Աբովյան. Պարսպ վախտի խաղալիք. 1864. էջ 93:

ասով զգում ու սարսափով պատկերացնում էր, թե օրավուր ի՛նչպիսի ան-  
գունդ էր գոյանալու գրաբարով ստեղծված դարավոր մշակույթի և նորօրյա  
թոթովանքների միջև, դեռ որքա՛ն հեռու էր ու մշուշապատ՝ աշխարհաբարով  
«խրթին խոսելու» օրը:

Արովյանն իր կրթությունն ու դաստիարակությունն ստացել էր գրաբա-  
րով, գրական առաջին ընձյուղներն արձակել գրաբարով, ապրիներով ուրանել,  
գտել ու որդեգրել իր սիրած գրաբար ոճերը, արտահայտություններն ու այ-  
լաբանական պատկերները և հիմա՝ հարկադիր հրաժեշտ էր տալու բանաս-  
տեղծական այդ հարազատ աշխարհին ու, որպես մանուկ թոթովախոս, կըմ-  
կըմալու էր անգրագետ հանրության պես:

Միտքն հարկադրում էր, սիրտը՝ համառում:

Սանր ու ահավոր էին կորուստները և անցանկալի՝ այդ ամենն առմիշտ  
թաղելը: Մանավանդ որ վերջին տարիների մասնավոր դիտողություններն ու  
ստեղծագործական փորձը նույնպես, կարծես թե, համոզում էին, այն էլ ո՛չ  
մեկ անգամ, որ աշխարհաբարի արդի վիճակը դեռ անբավարար է մարդկա-  
լին հոգու անհուն տառապանքներն ու նվիրական զգացումները վերարտա-  
դրելու, երևակայության սավառնումների և տիեզերական առեղծվածների վե-  
րաքննության համար. դեռևս որոշակի համակարգ չունեցող և թուրք-թաթա-  
րական բառերով ու ձևերով խճողված այդ լեզուն կարիք ուներ նախ՝ լրջու-  
րեն հղկելու, մշակելու և մաքրագործելու, ու հետո նոր՝ գործադրելու բարձ-  
րաթիղջ գաղափարների ու անհատնում տենչանքների վերարտագրման հա-  
մար: Եվ քանի դեռ չէր եկել այդ երջանիկ օրը, իսկ հոգու խռովքն էլ անկա-  
րելի էր քսակը, կուտակված մտքերն ու հույզերը անկարելի էր խեղդել, միակ  
հարմար միջոցը մնում էր գրաբարը, որով Եղիշեի դյուցազներգության և  
Նարեկա վանքի անմահ վանականի Ողբերգության մատյանի պես հանձարեղ  
հղացումներ էին կյանքի կոշվել:

Եվ հիրավի, Արովյանի ավելի քան երեսնամյա «փակ լեզվի կապը կըտ-  
րելու», «մունջ լեզուն բացվելու» և աշխարհաբար գրական հրաշակերտներ  
հորինելու նույն հիշարժան թվականին, 1841-ին, «Վերք Հայաստանի» վեպի,  
«Պարպկ վախտի խաղալիք» ժողովածուի, զանազան արձակ ակնարկների  
ու խորհրդածությունների («Բարեկամի մոտ», «Թիֆլիզու Հայոց հանգստա-  
րանը»), թարգմանական «Ագնես» պատմվածքի, «Ցեղորա» դրամայի հետ  
միաժամանակ ու նրանց զուգահեռ՝ Արովյանը գրել ու թարգմանել է նաև  
ուղիղ 30 բանաստեղծություն, որոնցից աշխարհաբար են միայն 9-ը, իսկ  
մնացած 21-ը՝ բացառապես գրաբար, որ պարտադրում է հետազոտողին՝  
լրջորեն հաշվի նստել այդ փաստերի և նրանցից բխող հետևությունների հետ:  
Բայց բանը միայն քանակական ցուցանիշները չեն: Գրաբար բանաստեղծու-  
թյունները սրակով ու ծավալով էլ անհամեմատ գերակշիռ են: Եթե նույն  
ընդամենը 398 է, ապա գրաբար բանաստեղծություններից միայն «Յունայ-  
նութիւն աշխարհի» ծավալը 231 տող է, իսկ բոլոր քսանմեկ քերթվածը  
միասին՝ 1128 տող, ուրեմն՝ շուրջ երեք անգամ ավելի, քան աշխարհաբար  
բանատողերը, բայց մինչև հետևություններ անելը նախ՝ ժամանակագրական  
հաջորդականությամբ վերընթերցենք խնդրո առարկա բանաստեղծությունների  
լիակատար ցանկը:

Ա. Գրաբար քերթվածներ (նշում ենք միայն շափածո տողերի քանակը,  
զանց առնելով գրաբար ծանոթությունները).

1841. «Հայրենեաց ծխոյն, հայրենեաց բոցոյն...» (46 տող), «Յունայ-  
նութիւն աշխարհի» (231 տող):

1842. «Կարօտութիւն առ սիրելին» (երկու բանաստեղծություն, 24+28 =  
52 տող), «Առ հանդէս ուխտի ի սուրբ յևառն Մթայ-Մմինդայ» (68 տող),  
«Մենաստան սուրբ Գեղարդայ վանից» (չորս երգ ու ծանոթություններ, 168  
տող, «Մաղիկը Արամեան դաշտաց խնկածին» (վերջում նամակ-բացատրա-  
կան, 40 տող), «Ձեզ ի սիրոյ մնասցէ նշան...» (շափածո ընծայագիր, 4 տող),  
«Ի ծոց լերանց գրկափակեալ սիրելեաց կապ...» (12 տող):

1844. «Սոնայ՝ տարաբախտ աղջիկն տաճիկ...» (128 տող), «Առ պատուական իմ բարեկամ և աշակերտ հոգեսուն...» (62 տող), «Սուտ ի Հայրենիս» (92 տող), «Առաջի պատկերի բազմերախտ իմ բարերարի՝ Ֆրիդրիխայ Պարրօաի» (վերջում ընդարձակ ծանոթություն, 66 տող)։

1845. «Զամանն ողջոյն ճպուռն ընդոստուն...» (թարգմ. Կոնիովից, 29 տող), «Մովեալ Աղուփսուն մտեալ ի յայգին...» (թարգմ. Կոնիովից, 13 տող), «Յուզի անձուկ Ձին ընդ առաջ...» (թարգմ. Խեմնիցերից, 17 տող)։

1846. «Մ'ւմ այս ժամ, շնորհաբեր այս վայրկեան...» (24 տող), «Արդ ո՛ր շատուածք բարբարոսաց...» (42 տող), «Ներսիսի ներբող նորահնար...» (8 տող)։

1847. «Այլ քեզ, Մուգայ սուրբ, միայն ես յանձնեմ...» (պատառիկ, 6 տող)։

Անթվակիր (1843—47 թթ. միջև). «Ուղի տարածիդ խլե զձեզ ի մէնջ...» (20 տող)։

Այսպիսով՝ յոթ տարվա ընթացքում Աբովյանն ստեղծել է 21 գրաբանություն = 1128 տող։

Բ. Աշխարհարար Բերթվածներ.

1841. «Աչքեր, ընչի համար դուք չե՛ք դուս դալիս, ա՛խ, չե՛ք դուս գալիս...» (30 տող), «Ազգասեր մարդը իր մեռնելու վախտը» (36 տող), «Տխուր դանգատ բարեկամի մոտ» (58 տող), «Իմ բարեկամ Աղաջան վարդանյանի պատկերի առաջին» (պատառիկ, 6 տող)։

1842. «Ում սիրտը որ տխուր ըլի...» (բաղկացած երեք հատվածից, 18+38+32=88 տող), «Խաղ բաժանվելու վրա» (48 տող)։ Այս 2 բանաստեղծությունն էլ գրված են համարյա միաժամանակ, օգոստոսի 3—4-ին, Աղամալյաններին հանձնելու համար։

1843. «Հախվերմագի գովքը» և կից նամակը (32 տող)։

1845. «Աղբար Աղամի ասած խոսքերը...» (12 տող)։

Անթվակիր (1840—46 թթ. միջև). «Սովամահ Շունն և էշն ու սև Ագուսվները» (88 տող)։

Այսպիսով՝ միևնույն ժամանակահատվածում Աբովյանը հորինել է ընդամենը 9-ը աշխարհարար ոտանավոր կամ 398 բանաստեղծական տող, մի ցուցանիշ, որ, պիտի խոստովանենք, նկատելիորեն ուռճացրել ենք։ Բանն այն է, որ «Պարապ վախտի խաղալիքի» մեջ մտած և 1841 թ. աշնանը գրված երեք բանաստեղծություն և նույն ժողովածուի համար նախատեսված, բայց հետագայում չօգտագործած մեկ առակ, որոնց շորսի տողերի քանակը հասնում է 288-ի, ժամանակագրական հավաստիության թելադրանքով նույնպես ընդգրկել ենք աշխարհարար քերթվածներից ցանկում՝ դանց առնելով միայն Աղասու շորս խաղերը, որոնք փրցված են «Վերբ Հայաստանի» վեպի համապատասխան չափածո հատվածից (III գլուխ), մասամբ էլ նույն երկի նախնական չափածո տարբերակի կորած մասերից։ Նշանակում է՝ իրականում «Վերբ Հայաստանի» վեպից, «Պարապ վախտի խաղալիքից» ու մյուս արձակ երկերից հետո ու նրանց հետ միաժամանակ Աբովյանը հորինել է ընդամենը աշխարհարար 5 ոտանավոր, բոլորը միասին՝ 110 բանաստեղծական տողից բաղկացած, որ գրաբար քերթվածներին զիջում է ավելի քան տասն անգամ։

Ավելին, Երևանում 1844—45 թթ. Աբովյանը կազմում է իր լավագույն քերթվածների ժողովածուն, ընդ որում՝ շատերը վերանայելով Եվ որ պակաս ուշագրավ է, այդ տետրակում չի գետեղել աշխարհարար ոտանավորներից և ո՛չ մեկը, այնտեղ ամփոփված բոլոր քերթվածներն էլ գրաբար են, գրված 1824—1844 թթ. ընթացքում։ Բանաստեղծություններից մի քանիսին Աբովյանն անհրաժեշտ է գտել կցելու բացատրություններ, որոնք նույնպես, բոլորն անխտիր, գրաբար են։

Առօրյա գրագրությունների ժամանակ դարձյալ, կարծես թե, Աբովյանն ավելի նախապատվությունը գրաբարին էր տալիս։ Այդ առումով հետաքրքրա-



կան պատկեր է ներկայացնում նրա նամակների լեզուն: 18:1—18:3 թ. Ընթացքում գրած նամակներից առ այսօր մեզ մատչելի են միայն 21-ը, որոնցից 17-ը գրաբար են, 3-ը՝ կես-գրաբար կես-աշխարհաբար, և միայն մեկն ամբողջությամբ աշխարհաբար, այն էլ ուղղված է իջ մանկահասակ աշակերտներից մեկին, որին Երևանի հայոց խոսակցական լեզուն ավելի սլոնորմբոնելի էր: Եթե հոգևոր գործիչներին ու հաստատություններին զբր-վածները, որոնք ինքնրստիքյան գրաբար պետք է լինեին, հնչյուն և Մկրտ-տիչ էմինին ուղղվածները մի կողմ թողնենք, ապա մնում է 5 նամակ ևս, որոնք, առանց այլևայլության, աշխարհաբար կամ, գեթ, կես-գրաբար կես-աշխարհաբար պետք է լինեին, մինչդեռ այդպես չէ:

Հանրային ու մանկավարժական գործունեության ընթացքում կրած ճա-խորդություններն իրենց ծանր հետևանքներն էին թողել Աբովյանի անձի ու շողու վրա: Համազգային կյանքի լճացումը սպառնում էր նրան էլ քաշել իր մեջ, իջեցնել մինչև խոր հատակը, խեղդել: Մանր սղբերգություն էր ապրում Աբովյանը, և այդ սղբերգության անցանկալի հետևանքներից մեկն անբա-նջերմորեն փայփայած ու խնամքով մշակված լեզվական ծրագրերից մի որոշ շափով նահանջ կատարելն էր, թեպետև հրապարակային ելույթների ժամա-նակ չէր դադարում պաշտպանել աշխարհաբարի դատը...

3

«Պարապ վախտի խաղալիքի» ստեղծագործական պատմության ուսում-նասիրությունը ասուլարեզ է հանում մի դառը ճշմարտություն ևս, որ ավելի հեղինակի անձին է վերաբերում, քան ստեղծագործությանը: Նկատվում է, որ հակառակ ժամանակի մյուս գրողների ու գործիչների՝ Հ. Ալամդարյանի, Մ. Քաղիդյանցի, Ս. Նազարյանցի, Մ. էմինի ու այլոց, Աբովյանը գործնա-կանության անբացատրելի թերիներ ուներ: Հանրային ու մանկավարժական շխրախուսված գործունեությունից և անվերջանալի ձախողանքներից տառա-պելով մեծապես՝ սկզբներում նա իր հսդին թեթևացնում էր բանաստեղծու-թյունների մեջ ու նամակներում: Բայց ելք այդ էլ չէր օգնում, գլխովին իրեն կորցնելով՝ մաղերն էր պոկում<sup>14</sup>: Եվ, որ առավել ցավալի է, վերջին տարի-նիրին արդեն չէր դիմում ո՛չ մեկին ու ո՛չ էլ մյուսին. շատ բան շտեմնելու էր տալիս, դժվարությունների առջև ընկրկում ու, կարծես թե, գոնե առերես, հաշտվում էր իրականության հետ՝ հավատացնելով ինքն իրեն, թե ո՛վ էլ լիներ իր փոխարեն, նույն բախտին պիտի արժանանար ու նույն կերպ վարվեր:

Դպրոցից բացի, մտածական գործունեության այլ ոլորտներում Աբով-յանը փորձ իսկ չարեց ծավալվելու՝ համարելով դա սրբապղծության պես մի բան: Թերթ չէր հրատարակում ու չէր էլ մտածում այդ մասին. ստեղ-ծագործություններն առանձին գրքերով չէր ապագրում, շատերի արտագրու-թյունն ու մշակումը թողել էլ կիսատ և, ընդհանրապես, նրանց լույս աշխարհ հանելու ողջ հույսը գրել էր ինչ-որ բարեգործի առատաձեռնության վրա: «Ո՞վ գիտի, բալբի թե մեկ աստվածասեր մարդ իր հոգու խաթեր տպիլ տա...»<sup>15</sup>: Իսկ այդպիսի բարեգործ նրա դուռն ընդհանրապես չբախեց:

Միայն 1841-ին, մինչ անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Ն. Ն. Կնոպֆի հանձնարարությամբ Տիդիսի գիմնազիայի մանկավարժական խոր-հուրդը վերստին անդրադառնում էր «Նախաշավղի» հարցին, և Աբովյանի մեջ, թեկուզ և կարճատև, հույսի ինչ-որ շող էր կարծես ճառագում, մանա-վանդ որ վերատեսուչը նրա հանդեպ լավ էր տրամադրված և, թվում է, ինչ-ինչ խոստումներ էլ տվել էր: Բայց շատ շանցած... Կնոպֆը վախճանվեց (19 օգոստոսի 1841 թ.), իսկ վերատեսուչության նոր իշխանավորը՝ ղեկավար-վելով այլ «սկզբունքներով» և ընդառաջելով Աբովյանի գաղափարական հա-

14 Ե, III, 2 (Ուղղում էի շատ անգամ մագերս պոկեմ...):

15 Ե, II, 190:

կառավարողներին, անսարգկային վախու կայացրեց (1842-ի ապրիլ)։ Անախա-  
շավդի», որպես դասագիրք, Անդրկովկասի դպրոցներում գործածելը և ուսմ-  
կական լեզվի ուսուցումը վերջիններում՝ առհասարակ մերժվեց, ընդհանուր  
ձևով միայն նշվեց, որ եթե գրախոսների նկատած թերությունները վերաց-  
վեն, և գրքի մեջ էլ գրաքննության օրենքներին հակառակ բաներ չնկատվեն,  
ապա Աբովյանն այն կարող է տպագրել հետաքրքրասերների (թե՛ բանա-  
սերներ) համար։ Այս վճիռը պաշտոնապես հեղինակին հաղորդվեց 1842 թ.  
ապրիլի կեսերին (16—20-ի միջև), թեև քննության արգյունքներին, այլ սյ-  
րյուններից, նա ծանոթ էր ավելի վաղ։

Եվ ա՛հ՝ կնոպֆի վերատեսչության շրջանում, կարծատև ոգևորության  
այն օրերին, 1841-ի կեսերին, Աբովյանը որոշում է իր աշխարհարար ստեղ-  
ծագործություններից մեկ-երկուսը հրատարակ հանել՝ աստիճանաբար կաղ-  
մելով «Պարապ վախտի խաղալիք» ծոզովածուն, սեփական միջոցներով  
տպագրել տալու համար։ Արդեն այդ ժամանակ աշխարհարար շատ գործեր  
գրած-պատրաստ ուներ նա, բայց առայժմ առանձնացնում էր միայն շա-  
փաբերականները՝ առակաները, բայթիները լավագույնները և մի քանի  
բանաստեղծություն։ «Ես չկարացի բոլորը ի միասին գրել, շունքի խարջը  
շատ կըլեր»,—խոստովանում է անկեղծորեն<sup>16</sup>։ Բայց գիրքը տպարան չգնաց  
ո՛չ այդ, ո՛չ էլ հաջորդ սարիներին, իսկ պատճառները ցարդ հանելուկ են  
մնացել։

Հաստատ որոշում կայացնել, անհրաժեշտ գումար ետ գցել, տպարա-  
նական շարվածքի համար սլահանջվող բնագիր պատրաստել, տառատեսակ-  
ների մասին հոգալ, գրել մինչև անգամ գրքի Հառաջաբանը և հետո, կար-  
ծես անսպասելի ու ակնթարթային հարվածից կտրվածահար, ո՛չ մի քայլ  
առաջ չշարժվե՞լ... Ի՞նչը կարող էր Աբովյանին հարկադրել նման կտրուկ,  
բայց և ցավալի շրջադարձ կատարելու։ Հոգեկան անհավասարակշիռ վիճա՞-  
կը, նախապես անտեսված, բայց և անհավաստահարելի ինչ-որ արգելքի երևան  
գա՞լը, իր ընտրած ուղու վերաբերմամբ հավատի կորուստը, վերջիվերջո  
ի՞նչը... դժվար է պարզ ու մեկին պատասխանել։

Հայտնի է, որ մասնավորապես 1840-ի կեսերից Աբովյանի դրամական  
գործերը մխիթարական չէին։ Մի կողմից՝ մասնավոր դպրոցը կլանեց նրա  
առձեռն միջոցները, մյուս կողմից՝ հարստանալու մտսին ունեցած ողման-  
աիկ պատկերացումները ծնունդ տվին նոր տհաճությունների և կանգնեցրին  
ձախողանքի առջև։ Ասել՝ հացի կարոտ էր Աբովյանը, ճիշտ չէր լինի։ Իրամ  
նա ուներ, միայն թե ո՛չ իր գրպանում, այլ պարտապանների ձեռքին, որոնց  
մեծ մասը իր մասնավոր աշակերտների ծնողներն էին, իր իսկ բնորոշմամբ՝  
«գոմշի կաշի, անսիրտ հոգի» «հախվեմագներ»<sup>17</sup>, ու չէին էլ մտածում նրա  
«դառն աշխատանքով դատած փողերը» վերադարձնելու մասին։

Կրացուցիչ միջոցներ գտնելու հույսով՝ 1840-ական թթ. սկզբներին Աբով-  
յանը գործարքի մեջ մտավ ինչ-որ մարդկանց, ավելի ճիշտ՝ օտարերկրա-  
ցիների հետ և, շեշտաբար վերջով անգամ, թե իրականում ո՞վքեր են նրանք,  
պարտք տվեց, որպեսզի դրսից ճոթեղեն ու այլ ապրանքներ բերելով՝ վաճա-  
ռեին Տփղիսում և շահից իրեն էլ բաժին տալին։ Հենց այստեղ էլ երևան  
եկավ առօրեական խնդիրներում Աբովյանի ցավալի անճարակութունն ու  
դյուրահավատությունը. ընկերները (որոնք, ինչպես երևում է, գերմանացի-  
ներ էին) խաբեբաներ ու ձախողակներ դուրս եկան և Աբովյանին պատ-  
ճառեցին նոր վնասներ։ Ոգուտի մասին մտածելն արդեն ավելորդ էր, պետք  
էր փրկել գեթ նրանց աված փողերը, որ անհույս բան էր։ Մեկը միայն այն-  
քան բարի գտնվեց, որ ստացածի դիմաց աւժամանակ Աբովյանի մոտ  
թողեց իր անձնական իրերի ու զգեստների մի մասը, որոնց ընդհանուր ար-

<sup>16</sup> Պարապ վախտի խաղալիք, 1864, էջ 6։

<sup>17</sup> Ե, 1, 178։

մերը մեծ բան չէր: Եվ ահա՛ այս վերջինը՝ լինելով ո՛չ միայն ստոր, այլև անպատկառ, ինչպես ասում են, հաշվել էր Աբովյանի ատամները, տարիներով փողը չէր վերադարձնում ու անգամ հոխորատում՝ վերաժողորմով վերջինիս արժանապատվությունը:

Նմանարևույթ տհաճությունների ուրիշ շատ առիթներ էլ կային: Բանն այն է, որ ումանք էլ մասնավոր հաշիվների մեջ Աբովյանին չկարողանալով խարել, սելառնում էին, որ կմխանան նրա թշնամիներին ու այդ ձևով կվնասեն, եթե ձայնը չկտրի և իրենց կամքը չկատարի<sup>18</sup>: Այս մասին պատմող մի նամակը, որ գրված է 1840 թ. ապրիլի վերջերին, ավելորդ չենք համարում մեջ բերել ստորև, քանի որ նախ՝ անտիպ է, և ասլա՛ իր մեջ պարունակում է խորհրդավոր ակնարկներ մինչև օրս մեզ համար հանկուղ մնացած ինչ-որ գործարքի կամ իրողության մասին:

«Հարգելի պարոն Աբովյան.

Մարտի 13-ին ես պատասխանեցի Ձեր նամակին<sup>19</sup>, որ, համաձայն Ձեր ցանկության, մի Երեկո, ժամը 7-ից հետո, կալցելեմ Ձեզ:

Եվ այսպես, ես Ձեր տուն եկա դատկին և Երեկ, շարք օրը, ապրիլի 27-ին. շատ սենյակներ ու դասարաններ բաց գտա, ձայն տվի, բայց որովհետև ոչ ոքի շտեպ ու շտեյի, Ձեր սենյակի տեղն էլ չգիտեի, ուստի ստիպված էի ձևանունայն ես դառնալ:

Ինձ համար ցավալի է, որ Դուք արձակուրդներին այնքան ժամանակ չունեցաք, որ լինձ բավարարեիք:

Բարեհաճեցեք ինձ մոտ գալ, իսկ իմ սենյակը Դուք գիտեք, ևս նախկին տեղն եմ ապրում:

Դործը խիստ շտապ է, որովհետև մայիս ամսի առաջին կեսին ճանապարհորդելու եմ, և դասերի ու գրքերի փողը ինձ հիմա շատ հարկավոր է:

Այս նամակը բերողի միջոցով, այնուամենայնիվ, մի քանի տողով հայտնեք լինձ օրն ու ժամը, երբ ես կարող եմ Ձեզ ինձ մոտ տեսնել, որպեսզի, համենայն դեպս, տանը մնամ:

Եթե ավելի շուտ շահջուղի, ապա, Երեկ, չորեքշաբթի, մայիսի 1-ին, մի քանի րոպե ազատ ժամանակ կունենաք:

Ձեզ հետ բերեք այն դասարանների ցուցակը և այլն, որ ես Ձեզ տվել եմ: Փորը-ինչ ավելի ղղույջ եղեք, պարոն, երբ իմ մասին եք խոսում:

Ի՞նչ եք կարծում, եթե ես ուղենայի Ձեզ վնասել, որքան հեշտ պիտի լիներ դա ինձ համար: Քանիսը նրանցից կեցցե՛ս կգոռային, հավատալով որ Դուք Ձեզ վնասում եք կամ վնասելու եք: Մի բան միայն մի մոռացե՛ք պահարանն ու ժամացույցը մեզ հայտնի կապիտանի մոտ: Այդպիսի բաներում է երևում գործելու կամքը:

Սակայն ես հույս ունեմ, որ մենք շատ շուտով հանգիստ և բարեկամարար կխոսակցենք և կբաժանվենք միմյանցից իրրև բարեկամներ:

Թիֆլիս, 28 ապրիլի  
1840 թ.

Հարգանքներով՝  
Ձեր անձնվեր Արենս»-Յ

Պահարանն ու ժամացույցը, որոնց մասին ակնարկ կա նամակում, մեզ թվում է, թե պետական (գալոցական) գույքերից էին, որոնք Աբովյանը, առանց նախապես վերադասների համաձայնությունն առնելու, տրամադրել կամ հանձնել էր ուրիշների, ներկա դեպքում՝ մի ինչ-որ կապիտանի, որի ով լինելը հնարավոր չեղավ պարզել: Աբովյանի այդ արարքի երևան դալը, ինչ խոսք, տհաճություն պատճառ կարող էր դառնալ: Սակայն մի քիչ ձախ

<sup>18</sup> Այս մասին տե՛ս Ա., № 410, 411 և 485:

<sup>19</sup> Աբովյանի այդ նամակը չի՛ պահպանվել:

<sup>20</sup> Ա., № 410:

գնանք և պահ մի ենթագրենք, թե այդ իրերի անունները խորհրդավոր ակնարկներ կամ մասոնական խորհրդանիշներ են և կամ՝ երբեք կատարված և միայն երկուսին, այսինքն՝ Աբովյանին և վերոհիշյալ նամակի հեղինակին հայտնի ինչ-որ գաղտնի կամ հակապետական արարքի հասցանշաններ: Բայց նախ՝ ցայժմ ո՛չ մի աղբյուրից հայտնի չէ, որ Աբովյանը, գոնե մինչև 1840 թ. դարունը, հանդես բերեր նման կարգի պաշտոնական խերացում կամ կատարած լիներ մի այնպիսի արարք, որն ենթակա լիներ ծանրագույն պատժի և պահանջեր գերզգուշավորություն: Եվ հետո՝ եթե նա երբևէ հարած լիներ մասոնական որևէ օթյակի, որ շատ կասկածելի ու անհավանական է, որովհետև մասոնական օթյակներ մինչև այժմ Անդրկովկասում երևան չեն բերվել, ապա մասոնությունն ինքնին ամենևին էլ դրական բան չէր: Անգամ դարասկզբի Ռուսիայում մասոնական օթյակները և նրանց հաճախորդները դիտվում էին որպես ապաքաղաքական երևույթներ ու անձինք, քաղաքական գործունեությունից սկզբունքորեն հրաժարվելու արտահայտություն<sup>21</sup>:

Ինչոր դեպքերում՝ Աբովյանն, ինչպես կուհել է տալիս դեպքերի հետագա ընթացքը, կատարում է Արենսի կամքը, և գալիք տարիներին էլ նրան շարունակում են «բարեկամությունը», որից, բնականաբար, շահվողը վերստին Արենսն էր<sup>22</sup>:

Այսօրինակ տհաճ պատմություններն, անտարակույս, կարող էին ինչ-որ դեր խաղալ «Պարապ վախտի խաղալիքի» տպագրությունը ձգձգելու մեջ, բայց երբեք վճռական պատճառ հանդիսանալ տվյալ ժողովածուի հրատարակության մտքից հեղինակի հրաժարվելուն: Անժխանելի է, որ «Նախաշավի» տպագրման ձախորդ պատմությունը, ապա և նույն գրքի՝ 1840 և 1841 թթ. կայսերական ակադեմիայի և Տիֆլիսի գիմնազիայի մանկավարժական խորհրդի քննությունների բացասական արդյունքները իրենց խոր կնիքն են դրել Աբովյանի գործունեության վրա: Նա հիմա ավելի կասկածամիտ ու անհամարձակ էր, քան առաջ, որևէ բան ձեռնարկելիս՝ վեհերոտություն էր հանդես բերում և տատանվում, անվերջ տատանվում: Բայց ամբողջ հարցն այն է, որ «Պարապ վախտի խաղալիքը» տպագրելու վճիռը կայացվել էր այդ բոլորից հետո:

Այնուամենայնիվ, ի՞նչը հարկադրեց Աբովյանին ետ կանգնել գրքի տպագրության մտքից. գուցե գրաքննական արդևլքները, գուցե զգուշավորությունը, պատշաճ հաստատությունների ուղադրությունն իր վրա հրավիրելուց խուսափելու համար, կամ էլ գիրք հրատարակելով՝ Երրորդ բաժանմունքի հալածանքներին ենթարկվելու վախը: Այսպես մտածողներ, անշուշտ, կան ու կլինեն: Բայց «Պարապ վախտի խաղալիքի» նյութերի գրեթե կեսը թարգմանություն էր ռուսերենից. դրանք նեմնիցերի, Դմիտրիևի, Կոիլովի հեղինակություններն էին, որոնց բնագրերն ազատորեն տպագրվում ու տարածվում էին կայսրության սահմաններում ու նրանցից բաց, որ չէր մտահոգում ո՛չ գրաքննությունը, ո՛չ էլ Երրորդ բաժանմունքը: Ուրեմն՝ պատճառներն ուրիշ տեղ պիտի փնտրել:

Իրենց խոհերն ու դիտավորությունները հանրությանը հասցնելու, ազգության հոգևոր կյանքը վերափոխելու գործում որոշակի դեր խաղալու համար իսկական գրողներն երբեք էլ չպիտի ընկրկեն ղժվարությունների առջև, պիտի տակալին: Բայց Աբովյանը, որի դրոգ լինելը վիճարկման ենթակա հարց չէ բնավ, հատ ու կենտ բարեկամներից և մասնավոր աշակերտներից բացի ո՛չ ոքի մոտ չէր կարողում իր գրվածքները, չենք ասում՝ տպագրության մասին մտածում:

21 С. С. Ланда. Дух революционных преобразований. 1816—1825. М., 1975, с. 320.

22 Ա, № 411 (այս մասին տե՛ս Արենսի երկտողը՝ գրված 7 ապրիլի 1843 թ.):

Իսկական արվեստագետները, իսկ Աբովյանն, անշուշտ, այդպիսին էր, ամենալավ զրաքննության, ամենախիստ հալածանքների պայմաններում էլ ուղիներ էին գտնում իրենց մտքերն ու զգացումները հանրության հետ կրկնելու, ողորդության խոսքեր ասելու վհատվածներին, բայց Աբովյանն այդ ուղղությամբ որևէ արմատական փորձ չէր անում, բազում հյուրընկալ զրույցներից և ո՛չ մեկը չէր ծեծում՝ ու շարժանելով բնավ, որ սեփական ստեղծագործության ճակատագրի նկատմամբ անտարբերությունն առաջին հերթին սավերի տակ էր լիղջում իր անձը:

Դուցե գրական աշխատանքը նրա համար իսկապե՞ս «Պարապ վախտի խաղալիք» էր լուրի, հաճելի ժամանց, զուցե նա մի առանձին համարում շունե՛ր իր տաղանդի նկատմամբ, և բուն կոչումը սուուցչության մեջ էր տեսնում: Չենք կարծում:

Մայրահեղորեն յուսահատված ու հլաթափված մարդը միայն կարող էր այդպես վարվել, որը պատճառը նախ և առաջ պիտի փնտրել մի կողմից՝ Աբովյանի խառնվածքի, և մյուս կողմից՝ նրա անձի ու գործի հանդեպ այնքան պաշտելի ազդակիցների ցույց տված անտարբերության մեջ, մի անկոծկելի իրողություն, որ զգացվում էր Դորպատից վերադառնալու հենց առաջին օրերին, ազգակիցների հետ ունեցած անմիջական շփումների ընթացքում, և որ նա սկզբներում շտեմնելու էր տալիս:

Ահա՛ ինչու «Պարապ վախտի խաղալիքի» սպառնալիցության խափանման գործում զրաքննության խստությունները կամ միջոցների շոտությունը պատճառ բունը գավառացու միա՛նիս փաստարկներ պիտի համարվեն, քանի որ առաջինի սարսափը՝ ժողովածուում ընդգրկված նյութերից դատելով, անտեղի էր, իսկ միջոցների հարցը՝ երկրորդական: Աբովյանի համար, անգամ 1842—43-ին, դժվար չպիտի լիներ այդպիսիք ձեռք բերելը, էլ չենք ասում, որ ուրիշները նրանից պարտք վերցնելով՝ այնուհետև, զանազան պատրվակներով, ձգձգում էին վերադարձնել ու յուրացնում էին:

Այդ դեպքում Աբովյանն ինչո՞ւ էր խնայում իր միջոցները՝ սեփական ստեղծագործությունների տպագրության համար: Դուցե սարսափո՞ւմ էր ծախք անելուց: Բնավ: Գերման միջավայրում դաստիարակված լինելով հանդերձ, իբրև արևելցի, նա շուայլ էր, անհրաժեշտության դեպքում՝ յոթ օտարին էլ դրամական օժանդակություն էր ցույց տալիս: Մեր համոզմամբ՝ բուն պատճառը գրողի և հասարակության փոխհարաբերությունների մասին Աբովյանի ունեցած ուժանտիկ պատկերացումն էր: Ինչ, գործնականում ձախողված և կյանքում քննություն չբռնած նրա սրող համոզումները, սրունց, այնուհանդերձ, հետևում ու հետևում էր սրբությունը:

Աբովյանի կարծիքով՝ եթե իր գրվածքները պետք էին հայությանը, եթե ազգը կամ հանրությունը զգում էր նրանց կարիքը, ապա վերջինս էլ թող բարի լիներ խրախուսել իրեն. այնպես ինչի՞ նման կլինեք, երբ մարդիկ, առանց հաշվի առնելու այդ, գրքեր էին տպում, որոնք այնուհետև ո՛չ ոք չէր գնում կամ կարդում, և միայն ավելանում էր ցեցերի ու փոշիների կերը:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե.— Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1—10, Երևան, 1947—1961:

ՉԱ.— ՉՀ պետական կենտրոնական պատմական արխիվ:

Ա.— Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարան. Աբովյանի արխիվ:

## НЕУДАЧА ИЛИ ОТСТУПЛЕНИЕ?

(Почему не осуществилось издание сборника Х. Абовяна  
«Развлечения в часы досуга»)

*Доктор филол. наук ПИОН АКОПЯН*

## Резюме

Со дня вступления на поприще народного образования главной целью Х. Абовяна была борьба за гражданские права живого армянского простонародного языка и внедрение его в литературу и школу, так как письменный язык—грабар уже становился преградой, мешавшей интеллектуальному развитию армянского народа и его национальной консолидации в новых условиях. Основная часть сочинений Х. Абовяна постдерптского периода (1837—1841)—повести и рассказы, романы, стихи и поэмы, лирические гимны—«баяты», эпические миниатюры, учебные пособия и т. д.—создавалась преимущественно на разговорном языке—ашхарабаре. В конце 1841 г. Х. Абовян составляет на ашхарабаре новый сборник поэтических басен и стихотворений, «Развлечения в часы досуга», добывает средства для его издания и даже подыскивает шрифты; однако через некоторое время Абовян оставляет эти замыслы и никогда больше не возвращается к ним. Почему? Оказывается, Абовяна постигают мучительные раздумия о судьбах древнеармянского языка, этого, по словам мыслителя, «погребенного клада». Он даже мелет надежду, что в скором будущем армяне могли бы постепенно перейти на грабар, как только подрастающее поколение, пройдя через школу, усвоило бы свой древний язык. Тогда же намечается перелом и в творчестве Х. Абовяна: для самовыражения он практически пользуется только грабаром. Наилучшие его стихи написаны на грабаре, на древнеармянском же языке ведется его личная переписка, начиная с 1842 г. Что касается вопроса публикации его произведений на ашхарабаре, Х. Абовян оставляет его полностью на распоряжение нации и содействие благотворителей.